

«ՎԵՐԱՊՐԱԾ ՄՇԱԿՈՒՅԹ» ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻՑ

Այս բաժնում զետեղված հոդվածների հիմնական դրույթները, որպես զեկուցումներ, ներկայացվել են ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից հասարակական կազմակերպություններին տրամադրվող դրամաշնորհային ծրագրի շրջանակում «Մատենադարանի երիտասարդ գիտաշխատողներ» ՀԿ-ի կողմից 2015 թ. ապրիլի 28-29-ին կազմակերպված «Վերապրած մշակույթ» գիտաժողովին:

ՓԻՐՈՒՋ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԼԵՀԱՀԱՅ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԿՐԱԾ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

Յեղասպանության հետևանքով հայ ձեռագրական մշակույթը կրեց ահռելի ու անդառնալի կորուստեր: Հայ մատենագրության համար այսուհետ այդ ձեռագրերը համարվում են ոչնչացված կամ դասվում այնպիսիների շարքը, որոնց ներկա գտնվելու վայրն անհայտ է: Բնականաբար, ձեռագրական այդ կորուստների թվի վերաբերյալ մեր պատկերացումները հարաբերական են. այլևս երբեք հնարավոր չի լինի ամբողջությամբ վերականգնել Արևմտյան Հայաստանի տարբեր կրոնական ու աշխարհիկ կառույցների հոգածության ներքո, անհատ անձանց տնօրինության տակ գտնվող ձեռագրերի իրական թվի պատկերը: Կորուստների թվային արտահայտության՝ բացի մասնագետների կողմից արված մոտավոր հաշվարկներից, իրական պատկերը հնարավոր է դառնում վերականգնել միայն մինչև 1915 թ. նկարագրված ձեռագրացուցակ-

ների կամ էլ ձեռագրերի հիշատակումների հիման վրա, լինեն դրանք տպագիր, թե անտիպ¹: Այնինչ մեր պատմական հայրենիքի ոչ բոլոր ձեռագրական հավաքածուներն էին ցուցակագրված կամ նկարագրված 1915 թ. դրությամբ: Հենց նկարագրված ձեռագրացուցակների եւ ձեռագրերի վերաբերյալ տարբեր հիշատակումների վրա ենք հիմնվել ներկայացնելու հայոց Յեղասպանության հետևանքով լեհահայ գրչության կամ դրան առնչվող ձեռագրական կորուստների պատկերը²:

Այստեղ նկատի ունենք ա) ձեռագրեր, որոնք ընդօրինակվել են լեհական թագավորության հայաշատ կենտրոններում, բ) ձեռագրեր, որոնք ընդօրինակվել են լեհական թագավորության սահմաններից դուրս, սակայն հայ գրիչների կողմից, որոնք ակնհայտորեն իրենց նույնականացրել են Լեհական թագավորության հայ համայնքի, նաև լեհական պետության հետ: Այդ մասին է փաստում այն հանգամանքը, որ գրիչներն ընդօրինակած ձեռագրերում իրենց անուններին ավելացնում էին համապատասխան «լեհացի» կամ «իլովացի» մակդիրը, ինչը հաճախ այլ կարգի տեղեկության բացակայության դեպքում դառնում էր տվյալ գրչի՝ լեհահայ համայնքից սերելու մասին միակ վկայությունը: Անհավանական ենք համարում այդ տիպի գրիչների՝ լեհահայ համայնքում մի կարճ ժամանակով գտնվելու թեզը: Ամենայն հավանականությամբ գործ ունենք հենց այդ համայնքներում ծնված, միգրացիոն նաև մի քանի սերունդ նախկինում այնտեղ ապրած հայերի հետնորդների հետ, հակառակ դեպքում անտրամաբանական կլիներ վերոնշյալ կարգի մակդիրների կիրառումը: գ) ձեռագրեր, որոնք վերանորոգվել են լեհահայ կենտրոններում գլխավորապես

¹ Տե՛ս Մատենադարանի գլխավոր ավանդապահ, Մայր ցուցակի եւ Ձեռագրագիտության բաժնի վարիչ Գևորգ Տեր-Վարդանյանի 2015 թ. մարտի 5-ի ԱՐՄԵՆՊՐԵՍ-ին տրված հարցազրույցը՝ «Յեղասպանության պատճառով կորստյան մատնված ձեռագիր-մատյանների թիվը կարող է գերազանցել 30 հազարը» (<http://armenpress.am/arm/news/796472/> - դիտումը՝ 22.09.2015):

² Սույն հոդվածի նյութը գլխավորապես հիմնված է XIV-XVIII դարերում Լեհական թագավորությունում հայ գրչությանը նվիրված մեր ստենախոսության վրա, որը պաշտպանել ենք 2015 թ.-ի հունիսի 26-ին Կրակովի Յագելոնյան համալսարանում (գիտական ղեկավար՝ պրոֆ. Փշիշտոֆ Ստոպկա): Հաշվի առնելով, որ աշխատությունը գրվել է 7 պաշտպանվել է լեհերեն լեզվով՝ ներկայումս աշխատում ենք վերոնշյալ թեմայով մենագրության լեհերեն տարբերակի վրա: Մեր խորին համոզմամբ, աշխատության հայերեն տարբերակը, որն անպայման մտադիր ենք հրատարակել, հնարավոր չէ իրականացնել լեհերեն տարբերակի հայելային օրինակով: Լեհ եւ հայ ընթերցողի՝ թեմայի վերաբերյալ աղբյուրների ու գրականության ունեցած գիտելիքը, դրա մատչելիությունն ու հասանելիությունը հաճախ միանգամայն տարբեր են, երբեմն էլ հակասական: Այս առանձնահատկությունը հաշվի առնելով, պիտի ստեղծի հայ ընթերցողի համար նախատեսված տարբերակ, որն անշուշտ ենթադրելու է այլ տիպի, քան լեհերեն տարբերակում, գիտական աշխատանք (օրինակ լեհերեն լեզվով աղբյուրների կամ գրականության հատվածաբար կամ ամբողջական հայերեն թարգմանություն. հակառակ աշխատանքը կատարել ենք լեհերեն տարբերակում):

Լվովում: Որպես կանոն դրանք միջնադարյան ձեռագրեր էին, ընդօրինակված Կիլիկիայի կամ Արիմի գրչության կենտրոններում, որոնք հայ գաղաթականների հետ հասել են Լեհական թագավորության սահմաններ: Ենթադրում ենք, որ այդ կարգի ձեռագրերը կամ հետագայում գնվել են տեղի մեծահարուստ հայերի կողմից կամ էլ հանդիսացել են նրանց՝ սերնդե սերունդ փոխանցվող ընտանեկան ժառանգությունը, նախքան լեհական թագավորությունում հաստատվելը: Արդեն տեղում Լվովում, այդ ձեռագրերը ենթարկվում էին վերանորոգման, անհրաժեշտության դեպքում ստանում էին նոր կազմ, վերականգնվում էին ընկած էջերը, երբեմն էլ նկարազարդվում էին: Մեկենասների դերում որպես կանոն հանդես էին գալիս համայնքի ավագանու անդամները՝ տանուտերերը, որոնց անունները բնականաբար հիշատակվում էին:

Որպես առանձին, այլ կարգի նյութեր են ներկայանում այն ձեռագրերը, որոնք չեն տեղավորվում վերը դասակարգված խմբերից ոչ մեկի տրամաբանության մեջ, սակայն հետաքրքիր տեղեկություններ էին պարունակում լեհահայոց համայնքի պատմության վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ ձեռագրերի մեծ մասը գրվել էր XVII դարում, թեև հանդիպում են ավելի վաղ ժամանակի ընդօրինակություններ: Կային Լվովում, Կամենեցում, Կ. Պոլսում, Կաֆայում, Գաղատիայում, Անկյուրիայի Կարմիր վանքում, Քյոթայահում, Սերաթում ընդօրինակված ձեռագրեր:

Վերը բերված դասակարգման Ա. խմբի ձեռագրերի օրինակներից է Մշո Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի համար 61 ձեռագիրը³: Ըստ ձեռագրացուցակի հեղինակի՝ այն Գրիգոր Տաթևացու վարդապետության ծաղկաբաղ էր: Նկարագրությունների մեջ առհասարակ բացակայում է բովանդակության ցանկը: Զեռագիրն ընդօրինակվել է 1581 թ.-ին հուլիսի 22-ին «ի աստուածապահ ֆաղաֆն Իլով, ընդ հովանեաւ ննջման սուրբ Աստուածածնին» Տեր Խաչատուրի որդի Հովհաննեսի ձեռքով: Պատվիրատուն լեհահայոց արքեպիսկոպոս պարոնտեր Պարսամ Տրապիզոնեցին էր⁴: Գրիչը, ով խնդրում է ներել իրեն ձեռագրում տեղ գտած հնարավոր սխալների համար, դասական դարձած այն պատճառաբանությամբ, թե հմուտ չէր գրագրության արվեստի մեջ, նշում է այդ գործին ձեռնամուխ լինելու պատճառը՝ «զհրաման երախտաւոր վարդապետիս մերում կատարեցայք»: Բարեբախտաբար գրիչը նշում է իր ուսուցչի անունը փոքր ինչ ներքև գտնվող երախտիքի խոսքում: Դա Տեր Սիմեոն մահտե-

³ Նկարագրությունը տես՝ Սահակ Ա. Մուրադեան, Նազարեք Պ. Մարտիրոսեան, *Յուզակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի և շրջակայից*, խմբագրեց Արայ Գալայճեան, Երուսաղեմ 1967, էջ 53-54:

⁴ Նրա մասին տես՝ Հ. Ն. Ակիմեան, Պարսամ տաղասաց (Պարսամ Տրապիզոնցի), արվեստիսկոպոս Անպոլսոյ, եւ իւր տաղն ի վերայ ակոպի, «Հանդէս Ամսօրեայ», 1930, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 590-593:

սին էր: Խոսքն ամենայն հավանականությամբ թագավորական թարգմանիչ, այսպես կոչված դրագոման Վասիլ Տիխնովիչի որդու՝ Սիմեոն Իլովեցու մասին է:

Լեհաստանից դուրս գործող լեհահայ գրչի օրինակ է Արմաշի վանքի ձեռագրացուցակի 148 համարի պատկերազարդ Ավետարանը՝ ընդօրինակված 1643 թ. «ի նոր-քաղաք ի սահմանս Նիկիոս»⁵: Ձեռագրի պատվիրատուն ոմն խոշա Պողոսն էր Մշո ճապաղազու գյուղից, իսկ գրիչը՝ Յոհան Լեհցին, ով խնդրում է հիշել նաև իր համշիրակ հոգևոր եղբորը՝ անկյուրացի Հովհաննես վարդապետին, ով կապող օղակ է հանդիսացել գրչի և պատվիրատուի միջև: Եթե «արտասահմանում» գործող լեհահայ այս գրչի կերպարը հայտնի է թերևս միայն շատ նեղ մասնագիտական շրջանակներում, ապա միանգամայն այլ է Բաբելեն Կյուլեսերյանի հեղինակած Կարմիր վանքի ձեռագրացուցակի համար 43 ձեռագրի գրչի օրինակը: 1609 թ. Կ. Պոլսում «ի լաւ եւ յընտիր յօրինակէ» ընդօրինակված Կանոնագիրքը գրվել է հայ մատենագրությանը քաջ ծանոթ Սիմեոն Լեհացու ձեռքով: Գրիչը խնդրում է ըմբռնումով մոտենալ իր աշխատանքին՝ բացատրելով, որ «զի էի պանդուխտ եւ դարիպ օտար երկիրս, եւ միտք իմ ցնոր եւ սփիւռ, եւ միայն զկատար փութացի»: Պակաս հայտնի կերպար չէ նաև ձեռագրի ստացողը՝ բանասեր Ազարիա Սասնեցին:

Անկարայի Կարմիր վանքի ձեռագրացուցակում են գտնվում մեր դասակարգման ձեռագրերի Գ. խմբի երկու օրինակների նկարագրություններ: Երկուսն էլ կվոլում XVI դարի երկրորդ կեսին գործող կազմարար Հովհաննեսի ձեռքի գործն են, ով ի դեպ հայ մատենագրության մեջ Սկևռայի Ավետարան կոչվող XII դարի ձեռագրի վերանորոգողն է⁶: Ձեռագրերից առաջինը պատկերազարդ ճաշոց է ընդօրինակված 1358 թ. Արիմում անվանի գրիչ Նատերի ձեռքով: Հայտնի չէ, թե երբ է ձեռագիրը հանգրվանել լեհահայոց համայնքում, սակայն հետագա հիշատակարանը փաստում է, որ 1599 թ. դրությամբ ձեռագիրը գտնվում էր կվոլում: Համաձայն հիշատակարանի՝ հենց այդ թվականին է վերանորոգվում: Այն իրականացրել է Հովհաննեսը, իսկ Պիլենքայի որդի Տեր Գրիգոր կրոնավորը նվիրել է օսլան: Վերանորոգումը կատարվել է տանուտեր պարոն Թորոսի որդի պարոն Յագուպի միջոցներով: 1641 թ. ձեռագիրը գնում է պան, այսինքն՝ պարոն Յակուբ վուլթը՝ պարոն Բիրումի որդին՝ ի հիշատակ իրեն և տիկնոջը՝ Հանուխնային, և նվիրաբերում Բրոդիում գտնվող նորաշեն

⁵ Տես՝ Յ. Թօփճեան, *Յուցակ ձեռագրաց Արմաշի վանքին*, Վենետիկ 1962, էջ 280-281:

⁶ Սկևռայի Ավետարանը, որը պատկանում է Լեհաստանի հայկական համայնքին, որպես ավանդ պահվում է Վարշավայի Ազգային գրադարանում: 2011 թ. ՀՀ անկախության 20-րդ տարեկիցի առթիվ Ավետարանի նմանահամությունը նվիրաբերվեց Մատենադարանին: Այդ մասին տես Վարշավայում հրատարակվող երկլեզու «Աւետիս» պարբերականում Արմեն Արտվիխի հեղինակած հոդվածը՝ A. Artwich, «Dar polskich Ormian dla Matenadaranu» [«Լեհահայերի նվիրաբերությունը Մատենադարանին»], *Awedis*, nr 8 jesień (համար 8 աշուն) 2011, s. 1:

Հաճատկատար եկեղեցուն⁷: Երկրորդ ձեռագիրը մագաղաթյա պատկերազարդ պատարագամատուց է՝ ըստ ձեռագրացուցակի հեղինակի՝ X-XI դարերում Կիլիկիայում ընդօրինակված: Ուշ շրջանի հիշատակարանի բովանդակությունից ենթադրվում է, որ ձեռագիրը պատկանում էր Տեր Գրիգոր Բոմանցուն, որն էլ 1598 թ. հունիսի 28-ին այն նվիրում է Սուրբ Խաչ եկեղեցուն (Լվովի): Ապա հաղորդվում է, որ պարոն Յուրբոն, պարոն Իվաշքո երեսփոխանի որդին «տեսաւ զայս սուր Պատարագամատուցս, որ եղծեալ էի ի հիւզալի տեղոջ եւ փափագմամբ ետուր կրկին նորոգել»: Ամենայն հավանականությամբ, սա ձեռագրի նոր սեփականատերն է: Վերանորոգումն իրականացրել է վերոհիշյալ Հովհաննեսը: Ձեռագրում կա լեհահայությանն առնչվող մեկ այլ հիշատակագրություն ևս, այս անգամ անթվական, հետևյալ բովանդակությամբ՝ «Զնիկոլ ԶԱՐՀԵՊԻՍԿՈՊՈՍՏ ԼԷՎԱ յիշեցէք ի յաղաւթս ձեր»⁸:

Այսպես կոչված այլ բնույթի, այսինքն՝ վերոհիշյալ ոչ մի խմբում չընդգրկվող ձեռագրերից, մեծ հետաքրքրություն է ներկայացնում Կարմիր վանքի ձեռագրացուցակի 93 համարի ձեռագիրը՝ գրված XVIII դարի սկզբին, ուր պահպանվել է լեհահայ արքեպիսկոպոս Վարդան Հունանյանի նամակի պատճենը՝ գրված 1713 թ. ապրիլի 1-ին Լվովում՝ լեհահայ կյանքի մի արտառոց դրվագի մանրամասնությամբ⁹: Նամակում սրբազանը նկարագրում է ոմն հաջի Յաղուպի ինքնասպանությունը: Մասնավորապես նշում է, որ այս (իմա՝ լեհական) թագավորության կարգի համաձայն, ինքնասպանը, ինչպես նաև դատապարտյալը զրկված է «օրինավոր թաղման շնորհից»: Այդպիսիների մարմինը կապում են ձիու պոչից, այնուհետև քարշ են տալիս քաղաքի փողոցներով, ապա տանում քաղաքից դուրս և գցում մի խորը փոսի մեջ: Նույնը պատրաստվում էին անել նաև ինքնասպանություն գործած հայի հետ: Սակայն արքեպիսկոպոսի ակտիվ միջամտության շնորհիվ, ով դահճապետից գրեթե բռնությամբ խլում է ինքնասպան եղածի մարմինն ու կարգադրում հուղարկավորել հայկական վանքի պարիսպների տակ, հաջողվում է սքողել այս միջադեպը: Իր արարքը սրբազանը նամակում բացատրում է նրանով, որ այս քայլով ինքը կանխել է հայ ազգի մասին վատահամբավության տարածումը: Նամակի բովանդակությունից հետևում է, որ արքեպիսկոպոսը հասցեատիրոջն է ուղարկել երկու գիրք. «Ընդ թղթաբերիս նուիրեմ եղբայրութեանդ զերկուս գրգուկս, զմինն ի կրթումն համբակաց եւ զմիւսն ի խոկումն»¹⁰:

⁷ Նկարագրությունը տե՛ս՝ **Բաբգեն Աթոռակից կաթողիկոս**, Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից, Անթիլիաս-Լիբանան 1957, էջ 771-778 (այսուհետ՝ Կարմիր վանք):

⁸ Ձեռագրի նկարագրությունը տե՛ս Կարմիր վանք, էջ 941-946:

⁹ Նամակի պատճենը տե՛ս Կարմիր վանք, էջ 472-474:

¹⁰ Կարմիր վանք, էջ 473:

Հետաքրքրական է Կարմիր վանք ձեռագրացուցակի ժողովածու ձեռագրում գտնվող մի նյութի բովանդակությունը: Համար 144 ձեռագրում ամփոփված են մոտ 1700 թվականով թվագրվող հավաքական նյութեր, ուր կա մի փոքրիկ պատում: Այն պատմում է Լեհաց աշխարհում մի մարդուն պատահած դեպքի մասին, երբ նրա ընտանի կենդանիների մոտ հիվանդություն է սկսվում, և նրանք սատկում են: Մարդը, բարկացած Աստծու վրա, դիմում է նրան, թե այսքան անասուն կոտորեցիր և դեռ հագեցած չես, ուրեմն իջիր ու կեր այս ամենը: Համաձայն պատումի՝ նա նույն պահին փոխակերպվում է շան, լափում կենդանիների լեշերը ու ապա շան նման սատկում: Վերջին նախադասությունը տեղեկացնում է, որ դեպքը տեղի է ունեցել 1636 թ. ծառատկին¹¹: Հայտնի է այս պատումի մի քանի օրինակ: Առաքել Դավրիժեցու Պատմության Բանք համառոտ, նշանակեալք թուականաւ, յսկզբանէ մինչև ցմեք ժամանակս վերնագրված ԾԵ գլխում պատումը սկսվում է «դարձեալ ի սոյն թուին» արտահայտությամբ, որտեղ նկատի ունի ՌՁԱ (1632) թվականը՝ վերևում նկարագրվածի տարեթիվը¹²: Դարձյալ 1632 թվականով է թվագրվում Երուսաղեմում պահվող ձեռագրում եղած պատումի շնչին փոփոխություններով օրինակը¹³: Այս պատումն ընդգրկված է նաև XVII դարի սկզբներին թվագրվող մի մանր ժամանակագրության մեջ¹⁴: Չնայած թվագրության և բովանդակության աննշան տարբերություններին՝ բոլոր օրինակներում անփոփոխ միջադեպի Լեհաց աշխարհում կատարվելու հանգամանքն է: Հետաքրքիր կլիներ պարզել, արդյո՞ք այս պատումը ստեղծվել է բուն լեհական կամ Լեհաստանի հայ համայնքի միջավայրում ու ապա ձեռագրերի ընդօրինակումների միջոցով տարածվել, թե սա հենց բուն հայկական միջավայրում հյուսված ավանդապատում է: Ամեն դեպքում Լեհաց աշխարհի հետ այն կապելու հանգամանքը ինքնին հետաքրքիր է:

Լեհահայոց պատմության վերաբերյալ կարևոր նյութ կար նաև Բաղեշի Ամրոդու վանքի ձեռագրացուցակում, որի 180-րդ համարը լեհահայոց XVI դարի երկրորդ կեսերի արքեպիսկոպոս Գրիգոր Վարագեցու պատմությունն էր¹⁵: Ցավոք, մեծ հետաքրքրություն առաջացնող խորագրից բացի, ուրիշ ոչ մի տեղեկություն չի պահպանվել:

¹¹ Տողատակում խմբագիրն ուղղել է 1634 թ.: Տես՝ Կարմիր վանք, էջ 693:

¹² Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Եր., 1990, էջ 482-483:

¹³ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. V, կազմեց Նորայր Եպս. Պողարեան, Երուսաղեմ, 1971, էջ 301:

¹⁴ Հմմտ. Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հ. II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Եր., 1956, էջ 283:

¹⁵ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատոր Գ, կազմեց՝ Օ. Եգանեան, խմբագրութեամբ՝ Փ. Անթարեան, Ա. Զեյթունեան, Յ. Քէօսէեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ քհյ. Հայրապետեանի, ցանկերը կազմեց՝ Վ. Դեւրիկեանը, Եր., 2007, էջ 552:

Բնականաբար, վերը նշված՝ հայոց Յեղասպանության հետևանքով ոչնչացված կամ ներկա գտնվելու վայրն անհայտ ոչ բոլոր ձեռագրերն էին, որ առնչվում էին լեհահայ գրչությանը կամ լեհահայությանն առհասարակ: Հաստատաբար ձեռագրեր են եղել նաև նվիրակության կամ դրամահավաքության նպատակով Արևմտյան Հայաստանի հոգևոր կենտրոններից լեհահայ համայնքներ եկած պատվիրակություններին տրվող նվիրաբերությունների կազմում: Դրա բազմաթիվ վկայությունները փաստվում են հայատառ ղիշաղերեն արձանագրություններում:

Пируз Мнацаканян Потери польско-армянских памятников письменности в результате Геноцида

Статья посвящена письменному наследию армян в Польском королевстве, которое в последствии Геноцида армян в Османской Империи в начале XX столетия было уничтожено, либо нынешнее местонахождение которого неизвестно. Эти манускрипты мы рассматриваем в трех плоскостях: а) рукописи, которые были скопированы в армянских общинах Польского королевства, в основном во Львове, б) рукописи, скопированные за пределами этого королевства, но переписчиками, которые отождествляли себя с армянской общиной старой Польши и польским государством. Об этом свидетельствуют эпитеты, добавленные со стороны тех же переписчиков к своим именам. Например *лехацы*, что означает “поляк” (т.е. “из Польши”), или *иловацы*, “львовянин”. Часто при отсутствии другой информации, эти эпитеты – единственное свидетельство того, что переписчики были выходцами из армянских общин Польши. Мы не рассматриваем армян, короткое время живших там, а лишь тех, кто родился или, быть может, на протяжении нескольких поколений жил в Польше. в) В третьей группе рассматриваются рукописи, отреставрированные в армянских колониях старой Польши. Как правило, это были средневековые рукописи, скопированные в скрипториях Киликии или Крыма, вместе с армянскими эмигрантами достигшие Польского королевства. Во второй половине XVI века они были отреставрированы во Львове армянскими переплетчиками. В роли меценатов выступали влиятельные члены армянской общины, чьи имена упомянуты в колофонах.

Отдельно рассматриваются рукописи, содержащие информацию об истории польских армян. Приводится письмо от 1 апреля 1713 г. архиепископа Вардана Гунаняна из Львова, в котором он рассказывает о самоубийстве армянина, некоего Хаджи Якова. По всей вероятности, не менее важный материал для истории армян в той части Европы содержала рукопись в библиотеке монастыря в Амирдолу, с историей архиепископа Григора Ванеци, возглавлявшего армянскую епархию во второй половине XVI в. К сожалению, заглавие – это все, что известно об этом деле, т. к. рукопись исчезла вместе с другими книжными собраниями во время разграбления монастыря.

В целом, рукописи были написаны в XVI-XVII вв, во Львове, Каменце, Константинополе, Крыме, Кютахьии, Галатии, Сэрэтии. Одна из отреставрированных во Львове рукописей датировалась X-XI вв. Материал для статьи основан на каталогах рукописей из Западной Армении, составленными до геноцида. При этом следует принять во внимание, что не все коллекции рукописей, хранившихся в религиозных или светских учреждениях или же бывших собственностью частных лиц в Западной Армении до геноцида, были описаны.

Piruz Mnatsakanyan
The Loss of Writings of Polish Armenians as a Result of the Genocide

The article refers to manuscripts which: have belonged the written heritage of Armenians in the Kingdom of Poland, were destroyed during the Armenian Genocide in the Ottoman Empire in the early 20th century or whose current whereabouts are unknown. These manuscripts are defined in three ways:

A. Those copied in Armenian communities in the Kingdom of Poland, basically in Lviv.

B. Those copied outside of the Kingdom by scribes who obviously identified themselves as belonging to the Armenian community in Poland or somehow with the Polish state. The provenience of the manuscripts is proven by epithets, additions to the scribes' names. For example *lehatsi*, meaning "Polish", in the sense: "from Poland" or *ilovatsi*, "from Lviv". Very often, if there is no other information, these epithets are the only evidence that the scribes came from the Armenian community of Poland. We do not take into consideration the scribes' short-term stay in Poland,

but only the Armenians born, or perhaps for several generations living in Poland.

C. Those restored in the Armenian communities in Poland. As a rule, these were medieval manuscripts copied in the scriptoriums of Cilicia and the Crimea and brought to the Polish Kingdom by Armenian immigrants. In the second half of the XVI century they were renovated in Lviv by the Armenian bookbinders. Patrons of these renovations were influential members of the Armenian community, whose names were mentioned in the colophons.

Manuscripts that contained information on the history of Polish Armenians are discussed separately, e.g. a letter written April 1, 1713 in Lviv by Archbishop Vartan Hunanian, where he tells about the suicide of an Armenian, Haji Jacob. Materials for the history of Armenians in that part of Europe were also present in the manuscripts deposited in the library of the monastery in Amirdolu, namely the history of Archbishop Gregory Vanetsi (from Van), who led the Armenian Diocese in the second half of the XVI century. Unfortunately, the titles of the manuscripts is all remained, as this collection disappeared along with other books during the looting and destruction of the monastery.

In general, the manuscripts were written from in the XVI-XVII centuries in Lviv, Kamenets-Podolsky, Constantinople, Crimea, Kutahya, Galatia, Sereth. One of the manuscripts renovated in Lviv dated to the X-XI centuries.

The material for this article is based on catalogs of manuscripts from Western Armenia composed before the Armenian Genocide. One should take into account that not all of the manuscript collections kept in religious or secular institutions, or being the property of individuals in Western Armenia before the Genocide, have been described.